ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ ԳՐԱԽՈՍԱԿԱՆ

Ավետիսյան Գեորգի Ռաֆայելի «Շների լեյշմանիոզի համաճարակաբանությունը Հայաստանի Հանրապետությունում» թեմայով՝ ԺԶ.00.01 «Անասնաբուժություն» մասնագիտությամբ անասնաբուժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Գրախոսականը տրվում է առաջին պաշտոնական ընդդիմախոսի՝ անասնաբուժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ալբերտ Վիրաբի Վարդանյանի կողմից:

Ատենախոսական աշխատանքի արդիականությունը

Ավետիսյան Գեորգի Ռաֆայելի ատենախոսական աշխատանքը նվիրված է Հայաստանի Հանրապետությունում շների լեյշմանիոզի համաճարակաբանական առանձնահատկությունների, տարածվածության, օջախների տեղաբաշխման, տարիքային և սեզոնային օրինաչափությունների, ինչպես նաև տնային ու վայրի շնազգիների դերակատարության գնահատմանը: Թեման արդիական է ինչպես անասնաբուժության, այնպես էլ հանրային առողջապահության տեսանկյունից, քանի որ ընդերային լեյշմանիոզը զոոնոզ բնույթի վտանգավոր հիվանդություն է և կենդանիների շրջանում չբացահայտված կամ չվերահսկվող վարակը կարող է նպաստել մարդկանց հիվանդացության տարածմանը՝ առաջացնելով ծանր ընթացք ունեցող հիվանդություն, հատկապես երեխաների մոտ, ընդհուպ մինչև մահ:

Աշխատանքում ընդգծված է, որ Հայաստանի Հանրապետությունում մարդկանց շրջանում 1999-2021 թվականներին գրանցվել են ընդերային լեյշմանիոզի նոր դեպքեր, մինչդեռ կենդանիների շրջանում համակարգված ախտորոշիչ հետազոտությունները երկար ժամանակ ամբողջական բնույթ չեն կրել: Այդ հանգամանքը մեծացնում է ներկայացված հետազոտության արժեքը, քանի որ շների և վայրի շնազգիների վարակվածության իրական պատկերի բացահայտումն անհրաժեշտ նախապայման է հիվանդության կանխարգելման, վաղ ախտորոշման և վերահսկման արդյունավետ համակարգի ձևավորման համար:

Հատկապես կարևոր է, որ հեղինակը խնդիրը դիտարկել է «Մեկ առողջություն» մոտեցման տրամաբանության մեջ՝ կապելով կենդանիների վարակվածությունը, մարդկանց առողջության ռիսկերը և փոխանցողների էկոլոգիական ակտիվությունը:

Աշխատանքի նպատակը, խնդիրները և կառուցվածքը

Ատենախոսության նպատակը ձևակերպված է հստակ, գրագետ և համահունչ է հետազոտության արդիականությանը: Հեղինակը նպատակ է դրել բացահայտել Հայաստանի Հանրապետության մարզերում և Երևան քաղաքի վարչական տարածքներում շների ընդերային լեյշմանիոզի օջախների առկայությունը, ուսումնասիրել հիվանդության աղբյուրներն ու փոխանցողների հետ առնչվող տարածվածության առանձնահատկությունները, ինչպես նաև առաջարկել գիտականորեն հիմնավորված միջոցառումներ հիվանդության կանխարգելման և վերահսկման ուղղությամբ:

Աշխատանքի խնդիրները տրամաբանորեն բխում են նշված նպատակից: Դրանք ընդգրկում են ինչպես համաճարակաբանական մշտադիտարկման, այնպես էլ լաբորատոր ախտորոշման, տարիքային ու սեզոնային վերլուծությունների և գործնական առաջարկությունների մշակման ուղղությունները: Նման կառուցվածքը հնարավորություն է ընձեռել հեղինակին ուսումնասիրությունը ներկայացնել ամբողջական շղթայով՝ սկսած խնդրի գիտական հիմնավորումից մինչև ստացված արդյունքների կիրառական նշանակության պարզաբանումը և կյանքի կոչելու հնարավորությունները:

Ատենախոսությունը կառուցված է ընդունված գիտական պահանջներին համապատասխան: Այն բաղկացած է ներածությունից, գրական ակնարկից, նյութի և մեթոդների նկարագրությունից, սեփական հետազոտություններից, արդյունքների քննարկումից, եզրակացություններից, գործնական առաջարկություններից և գրականության ցանկից: Աշխատանքում ներկայացված են աղյուսակներ, գծապատկերներ, փորձարկումների ակտեր և տեղեկանքներ, որոնք նպաստում են նյութի ընկալմանը և հետազոտական արդյունքների փաստացի հիմնավորմանը: Գրականության ցանկը ընդգրկում է մեծաթիվ աղբյուրներ, ինչը վկայում է թեմայի շուրջ միջազգային և տեղական գիտական տվյալների ուսումնասիրության մասին:

Հետազոտության նյութը և մեթոդաբանական մոտեցումները

Ատենախոսության առավելություններից է հետազոտական նյութի մեծ ծավալը: Հետազոտություններն իրականացվել են 2015-2025 թվականներին՝ ընդգրկելով Հայաստանի Հանրապետության տարբեր մարզեր և Երևան քաղաքը: Ուսումնասիրվել են տնային և թափառող շներ թվով 12720 գլուխ, ինչպես նաև շնագայլեր (90 գլուխ), ինչը հնարավորություն է տվել գնահատել ոչ միայն ընտանի կենդանիների, այլև վայրի շնազգիների հնարավոր դերը հիվանդության պահպանման և տարածման գործընթացում: Ընդհանուր առմամբ հետազոտված շների մեծաքանակ ընտրանքը թույլ է տվել ստանալ համեմատաբար վստահելի համաճարակաբանական պատկեր:

Հեղինակը կիրառել է համալիր մեթոդաբանական մոտեցում՝ ներառելով անամնեստիկ տվյալների հավաքագրում, կլինիկական զննում, համաճարակաբանական տեղեկատվության գնահատում, բջջաբանական և շճաբանական հետազոտություններ: Լաբորատոր ախտորոշման մեջ կիրառվել են ժամանակակից ինչպես ELISA մեթոդը, այնպես էլ IT Leish rK39 հակածնի հայտնաբերման հիման վրա գործող արագ իմունաքրոմատոգրաֆիկ թեստերը:

Վիճակագրական մշակման բաժնում ներկայացված են վարակվածության տոկոսային ցուցանիշների հաշվարկը, միջին արժեքները, ստանդարտ սխալները, հավաստիության միջակայքերը և տարբեր խմբերի միջև տարբերությունների գնահատման չափանիշները: Սա կարևոր է, քանի որ համաճարակաբանական բնույթի աշխատանքներում միայն դրական դեպքերի թվարկումը բավարար չէ. անհրաժեշտ է նաև ցուցանիշների համեմատելիություն, հավաստիություն և խմբերի միջև տարբերությունների գիտական մեկնաբանություն: Տվյալների վիճակագրական մշակումը աշխատանքին հաղորդում է ավելի բարձր ապացուցողականություն և արդյունքների լիարժեք հավաստիություն:

Միաժամանակ անհրաժեշտ է նշել, որ հետագա հրապարակումներում ցանկալի կլիներ առավել մանրամասն ներկայացնել նմուշառման սխեմաները՝ առանձին բացատրելով, թե որ դեպքերում է կենդանիների ընտրությունը կատարվել ակտիվ մշտադիտարկման, իսկ որ դեպքերում՝ կլինիկական կասկածի հիման վրա, որը հեղինակի կողմից հաստատվել է լաբորատոր հետազոտությունների արդյունքների արդյունքների հիման վրա: Այս հանգամանքը չի նվազեցնում աշխատանքի արժեքը, սակայն կարող է ավելի հստակ դարձնել ստացված ցուցանիշների վերլուծությունը տարբեր տարիներին և համայնքներում:

Գիտական նորույթը և ստացված հիմնական արդյունքները

Աշխատանքի գիտական նորույթն այն է, որ Հայաստանի Հանրապետության մարզերում և Երևան քաղաքի վարչական տարածքներում առաջին անգամ իրականացվել է շների ընդերային և մաշկային լեյշմանիոզի տարածվածության լայնածավալ և համակարգված ուսումնասիրություն՝ ժամանակակից շճաբանական մեթոդների կիրառմամբ: Մինչ այս աշխատանքը Հայաստանում առկա տվյալները մասնատված էին և չէին տալիս ամբողջական պատկեր հիվանդության օջախների տարածվածության, ռիսկային տարածքների, տարիքային ու սեզոնային առանձնահատկությունների վերաբերյալ:

Հետազոտությունների արդյունքում պարզվել է, որ 2015-2021 թվականներին ՀՀ մարզերում հետազոտված 12720 շների շրջանում լեյշմանիոզի դրական արդյունքների տեսակարար կշիռը կազմել է մոտ 12 տոկոս: Տարբեր մարզերում ցուցանիշները զգալիորեն տարբերվել են, ինչը վկայում է հիվանդության տարածման տարածքային անհամաչափության մասին: Սյունիքի, Տավուշի և Լոռու մարզերը առանձնանում են որպես համաճարակաբանական տեսակետից կարևոր տարածքներ, որտեղ առկա են թե՛ վարակված կենդանիներ, թե՛ փոխանցման համար բարենպաստ բնական պայմաններ:

Երևան քաղաքի տվյալների վերլուծությունը ևս կարևոր արդյունքներ է տվել: 2015-2023 թվականներին Երևանում հետազոտված շների մոտ լեյշմանիոզի դրական արձագանքած կենդանիների թիվը կազմել է զգալի բաժին, իսկ առանձին վարչական տարածքներում՝ Էրեբունիում (72 գլուխ), Շենգավիթում (71 գլուխ), Մալաթիա-Սեբաստիայում (49 գլուխ), և Նուբարաշենում (41 գլուխ), վարակման հավանականությունը գնահատվել է առավել բարձր: Բարձր և ցածր ռիսկային համայնքների համեմատությունը ցույց է տվել, որ բարձր ռիսկային համայնքներում շների վարակման հավանականությունը մի քանի անգամ ավելի մեծ է: Սա կարևոր կիրառական ցուցանիշ է, որը կարող է օգտագործվել նպատակային մշտադիտարկման ծրագրեր մշակելիս:

Աշխատանքում հեղինակը համոզիչ կերպով ներկայացրել է նաև տարիքային գործոնի նշանակությունը: Տարբեր տարիների և տարածքների տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ առավել հաճախ լեյշմանիոզով դրական են արձագանքել 1-ից 6 տարեկան շները: Ստացված արդյունքը համահունչ է այն պատկերացմանը, որ ակտիվ շարժունակություն ունեցող և արտաքին միջավայրի հետ ավելի հաճախ շփվող կենդանիները կարող են ավելի մեծ հավանականությամբ

ենթարկվել փոխանցողների ազդեցությանը, ինչպես նաև վտանգ հանդիսանալ մարդկանց վարակվելուն:

Սեզոնայնության վերաբերյալ տվյալները ևս գործնական մեծ նշանակություն ունեն: Վարակվածության դեպքերի մեծ մասը գրանցվել է գարնան և ամռան ամիսներին, ինչը հեղինակը կապում է փոխանցող ֆլեբոտոմինե դասի մլակների կենսաբանական ակտիվության բարձրացման հետ: Թեև որոշ տարիներին հեղինակի կողմից Երևանում իրականացրած հետազոտությունների հիման վրա դրական դեպքեր են արձանագրվել նաև այլ սեզոններին, ընդհանուր միտումը ցույց է տալիս, որ կանխարգելիչ միջոցառումները առավել նպատակահարմար է իրականացնել հենց փոխանցողների ակտիվացման նախորդող սեզոններում:

Աշխատանքի արժեքավոր մասերից է շնագայլերի ուսումնասիրությունը: Հեղինակը ցույց է տվել, որ ընտրված մարզերում շնագայլերի վարակվածության մակարդակը միջին հաշվով ավելի բարձր է, քան շների մոտ, և շնագայլերի ու շների վարակվածության հարաբերակցությունը կազմում է մոտ 1,5 գործակից: Այս տվյալը կարևոր է, քանի որ այն ընդգծում է վայրի շնազգիների հնարավոր դերը լեյշմանիոզի բնական օջախների պահպանման մեջ և անհրաժեշտություն է առաջացնում հետագա էկոլոգա-համաճարակաբանական ուսումնասիրությունների համար:

Գործնական նշանակությունը

Ատենախոսական աշխատանքի գործնական նշանակությունը բարձր է և կիրառելի: Ստացված արդյունքները կարող են օգտագործվել անասնաբուժական և առողջապահական ծառայությունների կողմից լեյշմանիոզի նկատմամբ մշտադիտարկման, ռիսկային տարածքների քարտեզագրման, կենդանիների վաղ ախտորոշման, ինչպես նաև բնակչության իրազեկման ծրագրերի մշակման նպատակով:

Հեղինակի առաջարկությունները կարող են նպաստել հիվանդության աղբյուրների և փոխանցողների նկատմամբ պայքարի համակարգված կազմակերպմանը: Գործնական տեսանկյունից կարևոր են հատկապես շների պարբերական սկրինինգային հետազոտությունները, դրական կենդանիների հաշվառումը, թափառող շների նկատմամբ վերահսկողությունը, փոխանցողների ակտիվության սեզոնային գնահատումը և համայնքային մակարդակում կանխարգելիչ աշխատանքների իրականացումը:

Աշխատանքում ներկայացված տվյալները օգտակար են նաև մասնագիտական ուսուցման և գիտական հետագա հետազոտությունների համար: Դրանք կարող են հիմք ծառայել ավելի խորացված ուսումնասիրությունների՝ փոխանցողների տեսակային կազմի, նրանց տարածվածության, կլիմայական գործոնների ազդեցության, ինչպես նաև մարդկանց և կենդանիների հիվանդացության տարածական կապերի գնահատման ուղղությամբ: Այսպիսով, ատենախոսությունը ունի ոչ միայն տեսական, այլև կիրառական և կազմակերպչական արժեք ինչպես կենդանիների, այնպես էլ մարդկանց առողջության պահպանման բնագավառում:

Դիտողություններ և առաջարկություններ

Ատենախոսական աշխատանքը ընդհանուր առմամբ դրական գնահատելով՝ նպատակահարմար եմ համարում ներկայացնել մի քանի դիտողություն և առաջարկություն, որոնք հիմնականում կրում են լրացուցիչ պարզաբանման բնույթ և չեն նվազեցնում աշխատանքի գիտական ու գործնական արժեքը:

Առաջին՝ ցանկալի կլիներ մեթոդաբանության մեջ ավելի մանրամասն ներկայացնել նմուշառման չափանիշները և ժամանակը ըստ կենդանիների պահման ձևի՝ տնային, ապաստարանային կամ թափառող շներ:

Երկրորդ՝ աշխատանքում նշվում է փոխանցողների՝ մլակների նշանակությունը, սակայն դրանց տեսակային կազմի և տարածվածության վերաբերյալ տվյալները ներկայացված են հիմնականում գրականության և անուղղակի եզրահանգումների հիման վրա: Հետագա հետազոտություններում ցանկալի կլինի ներառել նաև փոխանցողների ուղղակի հավաքագրում և լաբորատոր նույնականացում:

Երրորդ՝ մարդկանց և շների վարակվածության հարաբերակցության մեկնաբանությունը հետաքրքիր է, սակայն այդ կապը ավելի ամուր հիմնավորելու համար հետագա աշխատանքներում կարելի է կիրառել տարածական վերլուծության ավելի մանրամասն մեթոդներ՝ բնակավայրերի մակարդակով, հաշվի առնելով նաև կլիմայական, սոցիալական և կենդանիների խտության գործոնները:

Չորրորդ՝ Աշխատանքում ներկայացված են շնագայլերի վերաբերյալ արժեքավոր տվյալներ, սակայն հետագա հետազոտություններում նպատակահարմար կլինի ընդլայնել ուսումնասիրվող վայրի շնագզիների շրջանակը, ինչը թույլ կտա առավել ամբողջական գնահատել հիվանդության բնական օջախների պահպանման առանձնահատկությունները:

Եզրակացություն

Այսպիսով Ավետիսյան Գևորգի Ռաֆայելի «Շների լեյշմանիոզի համաճարակաբանությունը Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ատենախոսությունը ինքնուրույն, ամբողջական և գիտականորեն հիմնավորված աշխատանք է: Այն նվիրված է անասնաբուժության և հանրային առողջապահության համար կարևոր նշանակություն ունեցող խնդրի ուսումնասիրությանը և հիմնված է լայնածավալ դաշտային ու լաբորատոր հետազոտություններին:

Հեղինակը կարողացել է բացահայտել Հայաստանի Հանրապետությունում շների լեյշմանիոզի տարածվածության հիմնական առանձնահատկությունները, առանձնացնել առավել ռիսկային մարզերն ու Երևանի վարչական տարածքները, ցույց տալ տարիքային և սեզոնային օրինաչափությունները, ինչպես նաև հիմնավորել վայրի շնագզիների հնարավոր դերակատարությունը հիվանդության բնական օջախների պահպանման մեջ: Ստացված արդյունքները ունեն գիտական նորույթ և գործնական նշանակություն, իսկ ներկայացված եզրակացությունները հիմնականում բխում են կատարված հետազոտությունների արդյունքներից:

Ներկայացված դիտողությունները չեն կրում սկզբունքային բնույթ և չեն նսեմացնում ատենախոսության արժանիքները: Աշխատանքը համապատասխանում է

թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակը՝ Գեորգի Ռաֆայելի Ավետիսյանը, արժանի է ԺԶ.00.01 «Անասնաբուժություն» մասնագիտությամբ անասնաբուժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Առաջին պաշտոնական ընդդիմախոս՝
անասնաբուժական գիտ. դոկտոր, պրոֆեսոր՝ Ա. Վ. Վարդանյան

Անասնաբուժական գիտ. դոկտոր, պրոֆեսոր
Ա. Վ. Վարդանյանի ստորագրությունը հաստատում եմ ՀԱԱՀ-ի գիտ.
քարտուղար, գյուղ. գիտ. թեկնածու, դոցենտ՝ Գ. Վ. Ավագյան